



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՅԱՆՔԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

## WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [info@westernprelacy.org](mailto:info@westernprelacy.org) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



### ՍԱՆ ՖՐԱՆՍԻՍԿՈՅԻ ԲԱՂԱՔԱՊԵՏԻՆ ՀԵՏ ՀԱՆԴԻՊՈՒՄԻՆ

## ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ՈՒ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐՈՒ ՋԱՏԱԳՈՎ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՅԱՆՔՆԵՐԸ ԿԸ ՄՊԱՍԵՆՔ ՉՕՐԱԿՑԻԼ ՀԱՅՈՒԹԵԱՆ ԱՐԴԱՐ ԴԱՏԻՆ

*ՇԵՇՏԵՑ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ*

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի հովուապետական այցելութեան Սան Ֆրանսիսքոյի հանգրուանը յատկանշուեցաւ նաեւ պետական բարձրաստիճան անձնաւորութեանց հետ հանդիպումներով:

Ուրբաթ, 21 Հոկտեմբերի յետմիջօրէին, Վեհափառ Հայրապետը այցելեց Սան Ֆրանսիսքոյի քաղաքապետարանը եւ տեսակցութիւն ունեցաւ քաղաքապետ Էտվին Լիի հետ: Զաղաքապետին կողքին, հանդիպումին մասնակից էին քաղաքապետի օգնականներէն ու քաղաքապետութեան բարձրաստիճան պաշտօնատարներէն Շոն Էլսպըրնտ, Շարլոթ Շուլց եւ Մարք Չենտլըր: Վեհափառին կողքին էին Առաջնորդ Սրբազանը, Ազգ. Կեդրոնական Վարչութեան ու Թեմիս ժողովականութեան անդամներ, ինչպէս նաեւ Ս. Գրիգոր Լուսաւորչ եկեղեցւոյ հոգեւոր հովիւը, հոգաբարձութեան ու հովուապետական այցելութեան յանձնախումբի ներկայացուցիչները:

Սօտաւորապէս 45 վայրկեան տեւած հանդիպումին ընթացքին, Վեհափառ Հայրապետը գնահատանք արտայայտեց հայ գաղութին հետ քաղաքապետութեան շինիչ յարաբերութիւններուն ու յատկապէս Հայ Դատին ի նպաստ կեցուածքին համար: Ան վեր առաւ մշակոյթի ու համակեցութեան տիպար քաղաք մը ըլլալու Սան Ֆրանսիսքոյի յատկանիշը եւ գոհունակութիւն արտայայտեց, որ հայութիւնը մասնակից է քաղաքի բարգաւաճման:

Նորին Ս. Օծութիւնը յիշեցուց, որ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը եւս իր պատմական հողերէն հայութեան բռնագաղթին ու Տեղասպանութեան զոհերէն է, կը կանգնի հայութեան պահանջատիրութեան յառաջապահի դիրքերուն վրայ ու հետամուտ է ամեն տեսակի անիրաւութեան սրբագրումին, հայութեան բոլոր իրաւունքներուն վերականգնումին: «Մեր սպասումն է որ Միացեալ Նահանգներ կանգնին արդարութեան, մեր իրաւունքներուն կողքին, որովհետեւ Միացեալ

Նահանգներ կը հանդիսանան մարդկային իրաւութներու եւ արդարութեան ջատագով», շեշտեց Վեհափառ Յայրապետը, որ նաեւ ընդգծեց, որ Տեղասպանութեան կանխարգիլումը կենսական հրամայական է համայնքներու համար. «Տեղասպանութիւնը միայն անցեալին ու պատմութեան չի վերաբերիր, անկէկա այժմեական հարց է ու պէտք է դիմագրաւուի լուրջ մօտեցումով»:

Քաղաքապետ Լի պատասխանեց ըսելով, որ խորապէս ուրախ է Վեհափառ Յայրապետին այցելութեան համար: Ան անելցուց, որ բազմազանութիւնը կարեւոր յատկանիշ է իր քաղաքին համար ու կը հանդիսանայ անոր ինքնութեան բնաւի տարրը:

Հանդիպումը վերջ գտաւ յուշանուէրներու փոխանակումով:

## **HIS HOLINESS CATHOLICOS ARAM I MEETS WITH SAN FRANCISCO MAYOR EDWIN LEE**

On the afternoon of Friday, October 21, 2011, His Holiness Catholicos Aram I arrived at San Francisco City Hall where he met with Mayor Edwin Lee and staff.

Alongside Mayor Edwin Lee were Supervisor Sean Elsbernd, Mrs. Charlotte Schultz (Director of Protocol for the State of California), and Mr. Mark Chandler (Mayor's International Director).

His Holiness was joined by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, Councils members, Pastor of St. Gregory Church, and members of Board of Trustees and Pontifical Visit committee.

His Holiness stated that San Francisco is a special city and that he was glad the Armenian community is a part of the progress of the city. He continued, saying that the local is a basis for the national and global, that roots come from the local and a nation is built from activism of the local community. Speaking on the Armenian Genocide, His Holiness stated that prevention of genocide should be a priority for communities and nations. Genocide doesn't belong to the past, it is a present issue. The Armenian Genocide should be taken as a bitter experience. The rights of our people were violated and we struggle with the restoration of our rights. In conclusion, His Holiness stated that it is our expectation that our leaders of this country take the issue of Genocide recognition very seriously.

Mayor Lee stated that he was excited and honored for the visit of His Holiness. He added that diversity is key, and it is what attracts people to San Francisco.

The meeting concluded with an exchange of mementos.